

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջ

«Գրադարանային գործ» բաժին

Դիպլոմային աշխատանք

Թեմա՝ «Նախագծերով աշխատանքը
գրադարանում»

Ուսանող՝ Լիաննա Գարբինյան

Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան

Երևան 2023

Բովանդակություն

Նախագծերով աշխատանքը գրադարանում

Ներածություն

Գլուխ 1.

Ժամանակակից գրադարանավարի գործառույթները

1.1. Ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից գրադարանը

1.2. Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքները

Գլուխ 2.

Նախագծային աշխատանքը գրադարանավարի գործում

2.1. Ինչ է նախագիծը: Նախագծի տեսակները

2.2. Ինչպե՞ս աշխատել նախագծերով

Հավելված

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Որպես սկիզբ...

Ինչպես սկսվեց գրադարանավարի իմ աշխատանքը

Ժամանակակից դպրոցական գրադարանի հմտություններ ձեռք բերելու համար մասնակցեցի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանի կողմից կազմակերպված եռօրյա վերապատրաստմանը: Նախքան վերապատրաստումը այն կարծիքին էի, որ գրադարանավարը միայն գիրք տվող և ընդունող է: Այդ կարծրատիպը ինձ մոտ կոտրելու համար ես որոշեցի սովորել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական քոլեջի «Գրադարանային գործ» բաժնում: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական քոլեջի «Գրադարանային գործ» բաժնի դասախոսներից ստացած գիտելիքների շնորհիվ ես երեք ամիս անց ընդունվեցի Երևանի հ.134 հիմնական դպրոցում որպես գրադարանավար: Քոլեջից ձեռք բերված գիտելիքները փոխանցեցի և իրականացրի աշխատանքային վայրում: Իրականացրի ուսումնական տարբեր նախագծեր տարբեր դասարանների աշակերտների հետ, որոնք շատ օգտակար էին աշակերտներին: Գրադարանային միջավայրը դարձավ նախագծերի կազմակերպման և խրախուսման միջոց: Եվ հենց պատահական չէ, որ դիպլոմային աշխատանքի թեման ընտրվել է «Նախագծերով աշխատանքը գրադարանում»: Աշխատանքը բաղկացած է երկու գլուխներից: Առաջին գլուխը վերնագրված է հետևյալ կերպ՝ «Ժամանակակից գրադարանավարի գործառույթները», որն ունի ենթաբաժիններ՝

1.1 Ինչպիսին պետք է լինի ժամանակակից գրադարանը

1.2 Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքները...

Երկրորդ գլուխը վերնագրված է. Նախագծային աշխատանքը գրադարանավարի գործում որի ենթաբաժիններն են.

2.1 Ինչ է նախագիծը. Նախագծի տեսակները.

2.2 Ինչպես աշխատել նախագծերով

Գլուխ 1: Ժամանակակից գրադարանավարի գործառույթները

1.1 Ինչպիսին պետք է լինի ժամանակակից գրադարանը

Գրադարանը մի համակարգ է, որը կարևոր դեր է նշանակություն ունի կրթության և հասարակության կյանքի բազմակողմանի զարգացման գործում: Պատմամշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին՝ այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջների համապատասխան: Այսօր տեղեկատվական մեր դարում, գրադարանների կողմից կազմակերպվող տեղեկատվական, մշակութային, կրթական և գիտական գործունեության հիմնական նպատակը պետք է լինի գրադարանային հավաքածուների, մասնագետների ու նյութատեխնիկական բազայի միջոցով մարդու տեղեկատվություն ստանալու և ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացումը: Տեղեկատվական միջոցների հեղափոխության մեր ժամանակներում գրադարանների այլևս սոսկ գրքերի դարաններ չեն, այլ տեղեկատվություն պահպանելու և փոխանցելու աղբյուր: Այդ տեսանկյունից մասնավորապես դպրոցական գրադարանները պետք է կարողանան դառնալ տեղեկատվական և գրադարանային ցանցերի մի ամբողջական օղակ, ոչ միայն դուռ դեպի բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվության աշխարհ, այլ նաև ուղեցույց՝ այդ աշխարհում չմոլորվելու համար: Եվ սա հնարավոր է ապահովել՝ գրադարանի համար համապատասխան բարենպաստ միջավայր ստեղծելով, կատարելագործելով: Ժամանակակից գրադարանը պետք է կառուցվի բավարարել իր ընթերցողի պահանջները: Քանի որ այսօրվա ընթերցողները այլ պահանջներ ունեն, գրադարանը պետք է լինի ոչ թե գրքերի դարան, այլ տեղեկություն ստանալու կենտրոն և ծառայի ժամանակակից օգտատիրոջը: Մեր օրերում գրքերի թվայնացման գործընթացը մեծ թափ է ստացել, ընթերցողին պետք է ծանոթացնել և սովորեցնել ինչպես օգտվել թվային գրքերից: Աշխարհում արդեն վաղուց փոխվել են գրադարանային գործը, փոխվել են գրադարանների գործառույթները, ավելացել նոր գործառույթներ: Թվային տեխնոլոգիաների թռիչքային զարգացումը և տեղեկատվական հեղեղն անճանաչելիորեն փոխել են գրադարանների դեմքը:

1.2 Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքները

Ակնհայտ է, որ ժամանակակից գրադարանավարի աշխատանքում կարևոր տեղ է հատկացվում տեխնոլոգիական միջոցներին՝ համակարգիչ, համացանցը, տեսագրող և ձայնագրող այլ գործիքներ, պրոյեկտոր, մեդիատիրույթներ: Համակարգիչների մուտքը գիտական աշխարհում ու մեր բոլորի կյանքում հեղաշրջում կատարեց տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների, թանգարանների աշխատանքի նորովի կազմակերպում:

Դպրոցի գրադարանի պետք է ունենա բարձր տեխնիկական հագեցվածություն, որպեսզի պահպանի առավելագույնս ծավալուն տեղեկատվություն, գրաֆիկներ և այլն: Անհրաժեշտ է ունենալ նաև դպրոցի գրադարանի կառավարման հատուկ համակարգչային ծրագիր, որն ըստ հնարավորության պետք է լինի համացանցային Online Public Access to the Catalogue (OPAC) ծրագիրը կիրառելու համար: Գրադարանի ռեսուրսները և SZS սարքավորումները պետք է առավելագույնս օգտագործվեն ինչպես աշխատակազմի, այնպես էլ սովորողների կողմից:

Ինֆորմատիկայի ուսուցիչը և դպրոցի գրադարանավարը.

- ✓ Ինֆորմատիկայի ուսուցչի աջակցությունը մեծապես կօգնի գրադարանավարին ձևավորելու և զարգացնելու SZS հմտությունները, որպեսզի նա, իր հերթին, կարողանա սովորողներին ուսուցանել SZS՝ այդ թվում՝
- ✓ որոնում իրականացնել համացանցում,
- ✓ մեջբերում օգտագործելիս հղում անել,
- ✓ գնահատել տեղեկատվության ռեսուրսները,
- ✓ բացառել գրագողությունը,
- ✓ պահպանել հեղինակային իրավունքը,
- ✓ ինչպես նաև ընդհանուր գրադարանային հմտություններ տեղեկատվության օգտագործման համար:

Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքներից են ոչ միայն համակարգիչը, նոթբուքն ու պլանշետը, ձայնագրիչը, ֆոտոխցիկը, այլև նաև

թվայնացման (սքաներ) և պատճենահանման գործիքները, էլեկտրոնային գրքերի ընթերցիչը, նույն ինքը՝ Kindle-ը: Գրադարանավարի գործիքներն են նաև աշխատանքային բլոգն ու սոցիալական տարբեր հարթակները: Ստորև թվարկված գործիքների առկայությունը հնարավոր է դարձնում գրադարանավարի նախագծերով աշխատանքը:

Քուլեջում ուսումնառության տարիների ընթացքում առիթ եմ ունեցել՝ աշխատելու նշված գործիքներով, իմբազրական տարբեր ծրագրերով՝ ֆոտոշոփ, [«ABBY fineReader»](#), [«Adobe acrobat DC»](#), որը հաջողությամբ կիրառում եմ նաև իմ՝ գրադարանավարի աշխատանքում:

Պրակտիկայի ընթացքում Ազգային գրադարանում ծանոթացել եմ թվայնացման տարբեր գործիքների հետ, այդ թվում մամուլի թվայնացման հատուկ սքաների հետ, աշխատանքային այլ ծրագրերի:

Թվայնացման մեթոդներ: Նախկինում հաճախ օգտագործվել է տեքստի մեխանիկական հավաքում: Այսօր թվայնացման գործընթացն ունի երկու մոտեցում՝ պարտադիր և կամընտիր: Պարտադիր՝ ստանալ էջերի պատճենը գրաֆիկական նկարի տեսքով՝ սկանավորման կամ նկարահանման եղանակով: Այս պարագայում ամբողջությամբ պահպանվում է էջի կառուցվածքը և ձևավորումը, բացառվում է սխալի առկայությունը, սակայն անհնար է դառնում որոնումը կամ որևէ հատվածի գործածումը մեջբերման համար: Կամընտիր սկանավորումը կատարվում է գրանշանների օպտիկական ճանաչման սկզբունքով, և այն պահպանվում է էլեկտրոնային գրքերի համար նախատեսված ֆորմատներից մեկով: Այս դեպքում գրքում հնարավոր է դառնում որոնումը և մեծ մասշտաբների գրքերի ինդեքսացումը, սակայն բարդություններ են առաջանում օրիգինալ կառուցվածքի, նկարների և սխեմաների պահպանման ուղղությամբ, և գրեթե անխուսափելի են դառնում սխալները: Վերջին շրջանում ավելի հաճախ օգտագործվում են տեքստերի ավտոմատ ճանաչման ռեժիմը և օրիգինալ կառուցվածքի պահանումը, ինչը թույլ է տալի միավորել երկու մոտեցումների առավելությունները:

Գրքային սկաներներ: Գրքային սկաներները հատուկ նեղ մասնագիտական սկաներներ են, որոնք նախատեսված են ավելի արագ կամ հարմար սկանավորման

համար: Վերջին երկու տիպի սկաներներում հիմնականում օգտագործվում են ոչ թե սկանավորող մեխանիզմ, այլ բարձր կետայնության թվային տեսախցիկներ: Որոշ մոդելներում օգտագործվում են երկու տեսախցիկ, որոնք մեկը մյուսի հանդեպ տեղադրած են այնպիսի անկյունով, որ երկուսն էլ միանգամից նկարեն: Սովորական սկաներներում գիրքը դրվում է ապակու վրա, գրքի վրա լույս է ընկնում, և օպտիկական մեխանիզմը սկանավորում է էկրանը՝ շարժվելով ապակու տակ: Այլ գրքային սկաներներ օգտագործում են V-աձև շրջանակ և նկարում էջերը վերևից: Էջերը կարող են թերթվել ավտոմատ կամ անձի միջնորդությամբ: Մասնագիտացված սկաներները սեղմում են ապակին թղթին՝ դրանով էլ վերացնելով սկանավորման թերությունները: Սկանավորումից հետո ծրագրով շտկվում է փաստաթղթի նկարը, հավասարեցնում, վերափոխում է այն՝ դարձնելով տեքստ և վերածում էլեկտրոնային գրքի: Մարդկային միջամտությամբ հիմնականում ստուգում է սկանավորված նկարները սխալների ուղղման համար: Գերժամանակակից սկաներները ունակ են սկանավորելու գրեթե 1000 էջ մեկ-երկու ժամում: Գոյություն ունեն ձեռքի սկաներներ, որոնք ունակ են թվայնացնել ավելի քան 1200 էջ ժամում:

Գլուխ2: Նախագծային աշխատանքը գրադարանավարի գործում

2.1 Ի՞նչ է նախագիծը, նախագծի տեսակները

Հարց կարող է առաջանալ, թե ի՞նչ կապ կարող է լինել գրադարանի և նախագծային աշխատանքի միջև: Նշենք, որ հաշվի առնելով արդի գրադարանավարի առջև առկա պարտականությունների, գիտելիքի ամբողջական ցանկը՝ հարցը տեղին չէ: Գրադարանավարը պետք է օգտագործի ժամանակակից գրադարանավարի գործիքակազմը և հմտությունները՝ դպրոցում կրթությունը ավելի բազմակողմանի, բազմաշերտ, մշակութային առումով ավելի հագեցած դարձնելու համար: Գրադարանի կողմից կազմակերպած նմանատիպ նախաձեռնությունների շնորհիվ ավելի է ուժեղանում սովորողների կապը գրադարանի հետ, նաև նրանց հնարավորություն է ընձեռվում գրադարանը դիտարկել այլ տեսանկյունից: Հաշի առնելով Հայաստանի դպրոցական գրադարաններից «Տիգրան Հայրապետյան» գրադարանի տարիների փորձն այս գործում, երբ

գրադարանը ապրում է մշակութային, կրթական, կյանքով, ապա կարելի է ասել, որ այն դառնում է լիարժեք կրթօջախ կրթօջախի մեջ: Այստեղ ոչ միայն կիրառում են կրթական ոլորտի բոլոր տեսակի նորամուծությունները, այլև սովորեցնում են անել դա բոլոր այն գրադարանավարներին, ովքեր ցանկանում են կատարելագործվել իրենց աշխատանքում: Սա են վկայում գրադարանավարի ամենամյա վերապարաստումները:

Ինչպես հայտնի է՝ **նախագծային մեթոդի** կիրառման գաղափարը առաջացել է 19-րդ դարի սկզբին Ֆրանսիայի Ճարտարագիտական ակադեմիաներից մեկում, այնուհետև լայն տարածում է գտել գերմանախոս երկրներում: Եվրոպայից հասնելով ԱՄՆ՝ 1879թ Մանտ-Լուիսի Վաշինգտոնյան համալսարանին կից հիմնվեց «Manual Training School» դպրոց, որտեղ լայնորեն կիրառվում էր դասավանդման նախագծային մեթոդը: Աշակերտները պետք է ոչ միայն մշակեին նախագծերը, այլ նաև իրականացնեին դրանք արհեստանոցներում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով գրականության ընտրությանը, իրական պահանջարկին, վերջնարդյունքին: 1921թ նախագծային մեթոդը ստացավ վերջնական ձևակերպում Վ. Կիլպատրիկի «Kilpatrick, 1921, S. 283» աշխատությունում: Չնայած մեթոդի հեղինակը նա չէր, բայց այդ գործը դարձավ հենակետային և Նյու-Յորքի Կոլումբիական համալսարանին կից գործող Մանկավարժական քոլեջի տպարանում նրա աշխատությունը վերատպվեց 6000 օրինակ: Նախագծային մեթոդը զարգացման երկար տարիների ընթացքում բազում փոփոխություններ է կրել, բայց հիմնական գաղափարը և նպատակը մնացել է նույնը:

Նորագույն տեխնոլոգիաների դարաշրջանում ուսուցման նախագծային մեթոդը ենթադրում է նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների համադրություն: Ուսումնական նյութը յուրացվում է մանրամասն մշակմամբ՝ դիդակտիկ նպատակին հասնելու համար, որը, ամփոփելով այս կամ այն ձևակերպումը ստացած գործնական աշխատանքով, ստանում ենք միանգամայն իրական, շոշափելի արդյունք: Նախագծային մեթոդը

հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն: Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ ռեֆլեկտիվ, որոնողական, հետազոտական, համագործակցային, կառավարման կարողություններ, շնորհանդեսների պատրաստման և դրանց ներկայացման կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար:

Նախագծերը, ըստ իրենց տևողության, լինում են երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ՝ կախված նպատակից և տեսակից: Իսկ նախագծերն ըստ տեսակի լինում են՝ գործնական, կողմնորոշիչ, անհատական, տեղեկատվական և դերային: Նախագծային աշխատանքի կազմակերպումը պետք է սկսել հետևյալ կետերի՝

1. Նախագծային թեմայի ընտրություն,
2. Թեմայի տրոհում ենթաթեմաների,
3. Նախաձեռնող խմբերի ձևավորում,
4. Տեղեկատվության հավաքագրում,
5. Տեղեկատվությունների քննարկում, մշակում,
6. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում,
7. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում,
8. Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա),
9. Արդյունքների ամփոփում:

1-ին փուլում նախագծի կազմակերպիչը՝ տվյալ դեպքում գրադարանավարը, առաջարկում է նախագծի թեման, ներկայացնում է նախագծի

նպատակներն ու խնդիրները: Սովորողները թեման ընկալելուց հետո կունկրետացնում են նպատակներն ու խնդիրները:

2-րդ փուլը նախագծման փուլն է, որում նախագծի համակարգողը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում է կազմավորել խմբեր, բաշխում է աշակերտների դերերը խմբերում, պլանավորում նախագծի գործունեությունը և ներկայացման հնարավոր ձևերը: Աշակերտները կամ նախագծի ղեկավարը իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավորում աշխատանքը, ընտրում արդյունքների և շնորհանդեսի ձևերն ու եղանակները:

3-րդ փուլում տեղի է ունենում տեղեկատվության որոնումը, որտեղ նախագծի կազմակերպիչը՝ գրադարանավարը, գործին չի մասնակցում: Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում է խմբերի աշխատանքը, տալիս է լրացուցիչ տեղեկատվություն, գիտելիք, օգնում վերջնարդյունքը ներկայացնելու նախապատրաստմանը: Սովորողները աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խորհրդակցում են իրար հետ, որոնում և նախապատրաստում են նյութեր ներկայացման համար:

4-րդ փուլը նախապատրաստման փուլն է: Գրադարանավարը կատարում է դիտումներ, անհրաժեշտության դեպքում սովորողներին խորհուրդներ տալիս, նախապատրաստում է նախագծի պաշտպանությանը: Սովորողները կատարում են հետազոտություններ, վերլուծում են տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

5-րդ փուլը վերջնական՝ պաշտպանության փուլն է: Սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, իրենց կատարած աշխատանքները, կատարում են խմբային վերլուծություն, իսկ նախագծի կազմակերպիչը լսում է, սովորողներին հարցեր է ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում է նրանց կատարած աշխատանքի որակը և խնդրի լուծման ինքնատիպությունը: Կատարվում է արդյունքների գնահատում: Գրադարանավարը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական

հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

2.2 Ի՞նչպես աշխատել նախագծերով

Նախագծային ուսուցումը նորություն չէ, փաստ է: Այլ հարց է, որ այսօր մենք առավել, քան երբևէ, «կազմակերպման՝ որպես առաջադրման, մշակման, ուսուցման արդյունքների գրանցման ու քննարկման» խնդիր ունենք:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Մա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուիի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակված նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում: Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկացի ուսուցիչ Ուիլյա Շերո Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը, որտեղ նա այդ հայեցակարգը սահմանել է որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում՝ ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար՝

1. Ռեֆլեկտիվ հմտություններ,
2. Որոնողական, հետազոտական հմտություններ,
3. Համագործակցային հմտություններ,
4. Կառավարման կարողություններ, հմտություններ,
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ,
6. Ներկայացման հմտություններ:

Նախագծերի տեսակներ

1. Գործնական-կողմնորոշիչ նախագիծ (օրինակ՝ ուսումնասովանողակ նյութի ստեղծում),
2. Անհատական նախագիծ (օրինակ՝ սոցիալական հարցում միկրոհաշվիչի օգտագործման վերաբերյալ),
3. Տեղեկատվական նախագիծ (օրինակ՝ ստեղծել «Անվանի հայ մաթեմատիկոսներ» ինտերնետային էջ),
4. Ստեղծագործական նախագիծ (օրինակ՝ ոչ ավանդական մոտեցում նախագծային արդյունքի ստեղծման գործում),
5. Դերային նախագիծ (օրինակ՝ թատերական ներկայացում):

Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար

1. Նախագծային թեմայի ընտրություն,
2. Թեմայի տրոհում ենթաթեմաների,
3. Նախաձեռնող խմբերի ձևավորում,

4. Տեղեկատվության հավաքագրում,
5. Տեղեկատվությունների քննարկում, մշակում,
6. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում,
7. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում,
8. Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա),
9. Արդյունքների ամփոփում:

Կառուցվածքի փուլեր

1. **Պրոբլեմ (հիմնահարց)**՝ ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման, առաջարկում նախագծի հիմնական պրոբլեմը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները: Աշակերտներն իրականացնում են պրոբլեմի ընկալումը, իրադրության մեջ հարմարվելը, կոնկրետացնում նպատակներն ու խնդիրները:

2. **Պլանավորում (նախագծում)**՝ ուսուցիչը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում կազմավորել խմբեր, բաշխել աշակերտների դերերը խմբերում, պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը: Աշակերտներն իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավորում աշխատանքը, ընտրում արդյունքների և պրեզենտացիայի ձևերն ու եղանակները:

3. **Պրպտում (տեղեկատվության որոնում)**՝ ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում: Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք, կատարում պրեզենտացիայի փորձեր: Աշակերտներն աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խորհրդակցում են իրար հետ, որոնում և նախապատրաստում նյութեր պրեզենտացիայի համար:

4. **Պատրաստում (նախապատրաստում)**՝ ուսուցիչը կատարում է դիտումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներին խորհուրդներ տալիս, նախապատրաստում նախագծի պաշտպանությանը: Աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

5. **Պաշտպանություն (պրեզենտացիա)**՝ ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Աշակերտները

ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:

Հավելված: Ստորև ներկայացնում եմ իմ կատարած նախագծերը՝

Նախագիծ 1. Թեմա «Ընթերցում ենք Հ. Թումանյան»: 2022թ. փետրվարի 19 –ին Երևանի հ. 134 հիմնական դպրոցում տեղի ունեցավ ընթերցանության դաս նվիրված Հ. Թումանյանի ծննդյան օրվան: Խնդիրն էր զարգացնել երեխաների ստեղծագործական միտքը, նպատակը՝ ընթերցանության խթանումը: Նրանց մեջ սերմանել սերը դեպի գիրքը: Ընթերցանությունը անցկացվում էր համակարգչային սենյակում: Ընթերցանությունը ունկնդրում էին III^բ դասարանի աշակերտները: Արդյունքում երեխաների մոտ զարգացավ ստեղծագործական միտքը:

Նախագիծ 2. Թեմա՝ «Ընթերցանության Ֆլեշմոբ»: 2023 թ . ապրիլի 4 – ին Երևանի հ. 134 հիմնական դպրոցում տեղի ունեցավ ընթերցանության ֆլեշմոբ: Ֆլեշմոբը նվիրված էր Ղ. Աղայանի ծննդյան օրվան: Խնդիրն էր բոլորի մեջ սերմանել սերը դեպի գիրքը: Ընթերցանությունը անցկացվում էր դպրոցում: Ընթերցանությանը մասնակցում էին ամբողջ դպրոցի անձնակազմը: Բոլորի մոտ արթնացավ սերը դեպի ընթերցանությունը:

Նախագծային մեթոդը զարգացման երկար տարիների ընթացքում բազում փոփոխություններ է կրել, բայց հիմնական գաղափարը և նպատակը մնացել է նույնը: Նորագույն տեխնոլոգիաների դարաշրջանում ուսուցման նախագծային մեթոդը ենթադրում է նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների համադրություն: Ուսումնական նյութը յուրացվում է մանրամասն մշակման՝ դիդակտիկ նպատակին հասնելու համար, որը, ամփոփելով այս կամ այն ձևակերպումը ստացած գործնական աշխատանքով, ստանում ենք միանգամայն իրական, շոշափելի արդյունք: Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների,

հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն: Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ ռեֆլեկտիվ, որոնողական, հետազոտական, համագործակցային, կառավարման կարողություններ, շնորհանդեսների պատրաստման և դրանց ներկայացման կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար: Սովորողի համար նախագիծը ստեղծագործական ներուժը առավելագույնս բացահայտելու իսկական հնարավորություն է: Այն գործունեություն է, որը հնարավորություն է տալիս ինքնադրսևորվել թե՛ անհատապես, թե՛ խմբում, փորձել իր ուժերը, ներդնել գիտելիքները, օգուտ բերել, հրապարակել արդյունքը: Այն ուղղված է իրենց՝ սովորողների կողմից ձևակերպված հետաքրքիր խնդրի լուծմանը: Գործունեության արդյունքը՝ որպես խնդրի լուծման գտնված ձև, ունի գործնական բնույթ և կարևոր է իրենց՝ բացահայտողների համար: Իսկ ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ուսուցողական միջոց է և դաստիարակություն, որոնք էլ թույլատրում են մշակել և զարգացնել նախագծման հմտություններ, կարողություններ՝ նպատակապլացություն, գործունեության պլանավորում, խոհաձություն, ինքնավերլուծություն, ներկայացում և ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության փնտրտուք, ակադեմիական գիտելիքների գործնական կիրառում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծական գործունեություն:

Հեղինակներից շատերը, ովքեր տալիս են նախագծի սահմանումը, առանձնացնում են ուսուցման այս մեթոդի մի շարք բնորոշ առանձնահատկություններ. նախ և առաջ՝ խնդրի առկայությունը, որը պետք է լուծել նախագծի վրա աշխատելու ընթացքում, ընդ որում խնդիրը նախագծի հեղինակի համար պետք է ունենա անհատական կարևոր բնույթ և մղի նրան լուծումներ որոնելու: Նախագիծը անպայման պետք է ունենա հստակ, իրականանալի նպատակներ: Առավել ընդհանուր իմաստով նախագծի նպատակը միշտ բուն խնդրի լուծումն է, սակայն յուրաքանչյուր դեպքում այդ որոշումը կարող է ունենալ սեփական, բացառիկ մարմնավորում: Այդ մարմնավորումը նախագծի արդյունքն է, որը ստեղծվում է հեղինակի կողմից աշխատանքի ընթացքում և դառնում նախագծի խնդրի լուծման արդյունք: Այսպիսով, խնդրի հստակեցումը, նպատակի ձևակերպումը և նախագծի արդյունքի մտահայեցական նկարագրի ստեղծումը նախագծի առաջին բնորոշ

առանձնահատկություններն են: Նախագծի ևս մեկ տարբերությունը աշխատանքի նախնական պլանավորումն է:

Ողջ այդ ճանապարհը՝ սկսած խնդրի հստակեցումից մինչև նախագծի նպատակի իրականացումը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի, գտնել ռեսուրսներ, մշակել յուրաքանչյուր փուլի իրականացման համար նշված ժամկետով աշխատանքի մանրամասն գրաֆիկ: Որպես կանոն՝ նախագծի աշխատանքի պլանի իրականացումը կապված է գրականության և այլ տեղեկատվական աղբյուրների, տեղեկատվության ընտրության, տարբեր փորձարարությունների, փորձերի անցկացման, հետազոտությունների, հարցումների, վերլուծությունների, ստացված տվյալների ամփոփման, ինչպես նաև հետևությունների ձևակերպման և այդ հիմքի վրա նախագծի խնդրի լուծման սեփական տեսանկյուն ձևավորելու հետ: Նախագիծը անպայման պիտի ունենա գրավոր մաս՝ աշխատանքի ընթացքի հաշվետվությունը, որում նկարագրվում են աշխատանքի բոլոր փուլերը, առաջացած խնդիրներն ու դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում են տեղեկատվությունը, կատարված դիտարկումներն ու փորձարարությունները, ամփոփվում են արդյունքները, արվում հետևություններ, պարզաբանվում նախագծի հեռանկարները: Նախագծի պարտադիր պայման է նրա հրապարակային պաշտպանությունը՝ աշխատանքի արդյունքների ցուցադրությունը (презентация), որի ընթացքում հեղինակը ոչ միայն պատմում է աշխատանքի ընթացքի մասին և ներկայացնում արդյունքները, այլև ցուցադրում է նախագծի խնդրի լուծման սեփական փորձն ու գիտելիքները, ձեռք բերած իրավասությունը: Իր էությանը ուսուցման նախագծային մեթոդը նման է զարգացնող ուսուցմանը, որի դեպքում իրականացվում է նպատակասլաց ուսումնական գործընթաց: Սովորողը, լինելով այդ գործունեության լիարժեք գործող մարդ, գիտակցորեն նպատակներ է դնում է և ստեղծագործաբար հասնում դրանց: Նախագծային մեթոդը մանկավարժությանը մեջ այդքան էլ նոր չէ. համարվում է, որ այն սկիզբ է առել անցյալ դարի քսանական թվականներին ԱՄՆ-ում: Անվանվում էր նաև պրոբլեմների ուսումնասիրման մեթոդ, որը կապվում էր, նախ և առաջ, մարդասիրական խնդիրների ուսումնասիրման հետ: Այս մեթոդը մշակել են ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին և նրա աշակերտ Վ. Խ. Կիլպատրիկը: Դյուին առաջարկում էր ուսուցման հիմքում սովորողի ակտիվությունը՝ հիմնվելով սովորողի նպատակային գործունեության և անհատական հետաքրքրությունների վրա: Կարևոր է սովորողներին ցույց տալ իրենց անձնական շահագրգռվածությունը գիտելիք

ստանալու գործընթացում. գիտելիք, որը կարող է և պետք է կիրառվի կյանքում: Ուսուցիչը կարող է հուշել տեղեկատվության նոր աղբյուրներ կամ պարզապես անհրաժեշտ ուղղությամբ տանել աշակերտի միտքը: Արդյունքում սովորողները պետք է ինքնուրույն, համատեղ ջանքերով հաղթահարեն դժվարությունը՝ օգտագործելով տարբեր առարկաներից համապատասխան գիտելիքը, հմտությունը՝ անհրաժեշտ արդյունք ստանալու համար: Դյուին գրում է. «Երեխան կրկնում է մարդկության ճանաչողության ուղին, գիտելիքի յուրացումը սպոնտան, անկառավարելի գործընթաց է. երեխան յուրացնում է նյութը ոչ թե լսելով կամ ընկալելով զգայական համակարգով, այլ երբ զգում է այդ գիտելիքի կարիքը և յուրացման գործընթացի ակտիվ մասնակից է դառնում»:

Դյուին կրթության հաջողության գրավական է համարում՝

- ✓ Ուսումնական նյութի պրոբլեմականացումը,
- ✓ Երեխայի ակտիվությունը,
- ✓ Կրթության կապը երեխայի կյանքի, խաղի, աշխատանքի հետ:

Պրոբլեմային իրավիճակ ստեղծելու մեթոդական հնարքներ՝

- ✓ ուսուցիչը երեխաների համար ստեղծում է հակասական իրավիճակ և ինքնուրույն ելքեր որոնելու հնարավորություն տալիս,
- ✓ ներկայացնում է նույն խնդրի շուրջ եղած տարբեր վարկածներ,
- ✓ առաջարկում է երևույթը դիտարկել տարբեր տեսանկյուններից,
- ✓ ստեղծում է այնպիսի դաշտ, որտեղ կլինեն համեմատություններ, ընդհանրացումներ, եզրահանգումներ, հարցադրումներ
- ✓ տալիս է պրոբլեմային առաջադրանքներ:

Տարիների ընթացքում նախագծային մեթոդն ունեցավ զարգացման և անկման փուլեր: 1905թ ռուս մանկավարժ Շացկին սկսեց լրջորեն զբաղվել այս մեթոդի ձևակերպումներով ու փորձարկումներով: Ավելի ուշ՝ 1931թ., Խորհրդային Միությունում այս մեթոդը դատապարտվեց և արգելվեց: Եվրոպական երկրներում էլ նախագծային մեթոդը տարերային զարգացում ունեցավ:

Այժմ աշխարհում այս մեթոդին կրկին սկսել են լուրջ ուշադրություն դարձնել: Հիմնական ձևակերպումը հետևյալն է. «Գիտեմ, թե ինչի համար է ինձ պետք այն, ինչ ես սովորում եմ, որտեղ և ինչպես կարող եմ գործածել»: Նախագծերի մեթոդ անհատական կամ խմբային (համաաշխարհային պրակտիկայում երկու սովորողից ավելի չի նշվում) աշխատանք է, որը սովորողներն իրականացնում են որոշակի ժամանակահատվածում: Հիմնականում ուղղված է որևէ վիճարկելի խնդրի հաղթահարմանը: Նախագծային մեթոդը կարևորում է միջառարկայական կապը և համագործակցությունը: Ենթադրում է հետազոտական, որոնողական, համադրական, ստեղծագործական կարողությունների խթանում: Նախագծային մեթոդը կյանքի է կոչվում իբրև ժամանակի պահանջ. այն դառնում է կրթական համակարգի յուրահատուկ պատախաճանք պետության ու ծնողական համայնքի առաջ քաշած հարցադրումներին: Այս մեթոդը ժամանակակից մանկավարժության ինտերակտիվ մեթոդներից մեկն է, այն կրթական գործընթացի անհրաժեշտ բաղկացուցիչ է, անվանվում է նաև ապագայի մանկավարժություն: Ինչպես նշում է ռուս մանկավարժ, գիտնական Պոլատը. «Միասին սովորելը ոչ միայն հեշտ է և հետաքրքիր, այլև զգալիորեն արդյունավետ»: Նախագծային մեթոդը համարվում է կրթական մի համակարգ, որը հնարավորություն է տալիս ձեռք բերելու գիտելիք և հմտություն գործունեության մեջ, երբ ինքդ նախագծում ես, իրականացնում՝ աստիճանաբար բարդացող նախագծերը: Նախագծերը, որքան էլ առաջին հայացքից լրիվ տարբեր թվան, իրականում փոխկապակցված են, դրանց շարունակական զարգացումը հնարավորություն կտա՝ ապահովելու ուսումնական գործընթացի շարունակականությունն ու զարգացումը: Նախագծից նախագիծ առաջադրվող խնդիր-առաջադրանքները պետք է բարդանան, անպայման անհրաժեշտ է հաշվի առնել նախորդ նախագծում կոնկրետ սովորողի, խմբի ձեռք բերած հմտությունները և հաջորդ նախագծում ապահովել դրանց զարգացումը: Նախագծից նախագիծ սովորողների զարգացող հմտություններին զուգահեռ պետք է փոխվեն նաև գնահատման մոտեցումները: Այժմ ուզում եմ անդրադառնալ նախագծերի դասակարգմանը: Իմ որոնումները ցույց տվեցին, որ այս մասում ևս դեռ շատ անելիք կա՝ աշխատանքի լայն դաշտ: Հետաքրքրեց երկու դասակարգում. մեկը՝ **ռուս մանկավարժ, գիտնական Պոլատի** դասակարգումն է, որն, իր տեսակի մեջ, ամբողջական է ու համակարգային: Ծանոթանալ, կարդալ՝ արժե: Ներկայացնում եմ ռուս մանկավարժի դասակարգումը՝ իմ թարգմանությամբ և խմբագրմամբ:

Նախագծերի տեսակները

1. Ըստ գործունեության տեսակի՝

- ✓ Հետազոտական,
- ✓ Ստեղծագործական,
- ✓ Դերային-խաղարկային,
- ✓ Տեղեկատվական,
- ✓ Գործնական-կողմնորոշիչ,

2. Առարկայական- բովանդակային՝

- ✓ Մոնոնախագծեր,
- ✓ Միջառարկայական,
- ✓ 3. Տարածքային.
- ✓ Ներքին կամ տարածաշրջանային,
- ✓ Միջազգային,

4. Սովորողների քանակի՝

- ✓ Անհատական,
- ✓ Զույգային,
- ✓ Խմբային,

5. Ժամանակային՝

- ✓ Կարճաժամկետ,
- ✓ Միջնաժամկետ,
- ✓ Երկարաժամկետ,

6. Ըստ արդյունքների՝

- ✓ Ջեկուցում, ալբոմ, ժողովածու, կատալոգ,
- ✓ Մակետ, գծագիր, ուղեցույց-քարտեզ,

- ✓ Վիդեոֆիլմ,
- ✓ Ցուցահանդես:

Մյուս դասակարգումը **ավստրալիացի նովելագիր, ծրագրավորող Սայմոն Հայնեսի** դասակարգումն է. թարգմանաբար ներկայացնում նաև այս դասակարգումը: Հայնեսն առանձնացնում է նախագծերի հետևյալ տեսակները՝

- ✓ Տեղեկատվական կամ հետազոտական նախագծեր (Information and Research projects),
- ✓ Ուսումնասիրություն-նախագծեր (Survey projects),
- ✓ Արտադրական նախագծեր (Production projects),
- ✓ Դերային խաղ և դրամատիկ ներկայացում նախագծեր (Performance and Organisational projects):

Ժամանակակից մանկավարժությունը շատ է անդրադառնում այս մեթոդին՝ կատարվում են տարատեսակ փորձարկումներ ու մշակումներ: Որպես խոչընդոտ՝ նշվում է դասարանում սովորողների մեծ թիվը, ժամանակային ծանրաբեռնվածությունը, վերապատրաստող մասնագետների ու համապատասխան մշակումների պակասը: Որպես առավելություն՝ կրթության հանդեպ հետաքրքրության առաջացումը, մտածող ու հասարակական ակտիվություն ունեցող քաղաքացու ձևավորումը, թեստային համակարգի իրական այլընտրանքի ստեղծումն ու ապագային ուղղվածությունը: Ինչպես հայտնի է՝ նախագծերը լինում են անհատական և խմբային: Այժմ կղիտարկենք խմբային նախագիծը և անհատական ու խմբային նախագծերի առանձնահատկությունները: Խմբային նախագիծը թույլ է տալիս լուծել ինչպես մի շարք ուսումնական, այնպես էլ հատուկ դաստիարակչական խնդիրներ: Բացի դրանից՝ խմբային նախագծի իրականացումն իրենից դժվարություն է ներկայացնում հենց դասավանդողի համար: Առաջին կարևոր և հիմնական դժվարությունը նախագիծն իրականացնող խմբի ձևավորումն է: Իդեալական խմբի անդամները պիտի լինեն ակտիվ, ինքնուրույն և պատասխանատու անձինք: Նրանք պետք է լինեն գաղափարներով հարուստ, բանիմաց, անընդհատ պրպտող, փնտրող, հետազոտող: Սովորողները պիտի կարողանան համագործակցել, ցուցաբերել ճկունություն և սկզբունքայնություն, հարգեն դիմացինի կարծիքը և հարկ եղած դեպքում հաստատականորեն պնդեն իրենց կարծիքը, իսկ

փոխզիջման գնան հանուն ընդհանուր նպատակի: Մի պահ նույնիսկ դժվար է պատկերացնել իրական դպրոցական իրավիճակ, որտեղ կարելի է իրագործել վերը նշված բոլոր պայմանները: Բայց եթե սովորողները նախագծեր իրականացնեն հինգերորդ դասարանից սկսած, ապա ութ-իններորդ դասարաններում նրանք կկարողանան աշխատել խմբային նախագծերի վրա առանց դժվարությունների:

Խմբային նախագծերը չեն կարող երկարաժամկետ լինել: Սովորողները կդժվարանան երկար ժամկետով համագործակցել և միասնական աշխատանք իրականացնել: Դասավանդողին նույնպես դժվար կլինի հետևել երկարատև խմբային աշխատանքին, այդ պաճառներով էլ խմբային աշխատանքները, որպես կանոն, ուսումնական են և կարճաժամկետ:

Խմբային նախագծերը նպատակահարմար է իրականացնել, երբ դասարանում կարիք կա ձևավորելու «կոլեկտիվ» հասկացությունը, երեխաներին սովորեցնելու համագործակցել միմյանց հետ: Սակայն խմբային աշխատանքի ժամանակ ոչ բոլոր սովորողներն են հնարավորություն ունենում ակտիվ և հավասար մասնակցություն ցուցաբերելու աշխատանքի բոլոր փուլերում: Միշտ էլ ինչ-որ մեկը կատարում է հիմնական աշխատանքը, իսկ մյուսը՝ անցնում երկրորդ պլան: Այդ իսկ պատճառով խմբային նախագծերի հետ համատեղ սովորողները պետք է իրենց ուժերը փորձեն նաև անհատական նախագծերում:

Խմբային և անհատական նախագծերի առանձնահատկությունները

Աշխատանքի տեսակը	Դրական կողմեր	Բացասական կողմեր
Խմբային նախագիծ	Ձևավորվում է համագործակցելու, ճկունություն ցուցաբերելու, դիմացինի կարծիքի հետ հաշվի նստելու, հանուն ընդհանուր նպատակի փոխզիջման գնալու կարողությունները:	Առանձին սովորողներ հնարավորություն են ստանում ակտիվություն չցուցաբերելու և մնալու խմբի ակտիվ անդամների ստվերի տակ:

	<p>Նախագիծը կարող է ավելի խորը և բազմակողմանի իրականացվել:</p> <p>Թույլ է տալիս աշխատանքի բաժանում կատարել, և խմբի յուրաքանչյուր մասնակից կարող է առավելագույնս ցուցաբերել իր հմտությունները այն աշխատանքում, որը նա շատ լավ է կարողանում կատարել:</p> <p>Խմբային աշխատանքը անվտանգ համապատասխան միջավայր է ստեղծում անհինքնավստահ և անհանգիստ երեխաների համար: Այն նպաստում է ձևավորելու ճիշտ փոխհարաբերություններ այդ երեխաների և նրանց հասակակիցների միջև, որի արդյունքում բարձրանում է ինքնագնահատականը:</p> <p>Համատեղ աշխատանքը հնարավորություն է տալիս փորձ ձեռք բերելու՝ դիտարկելով մյուսների կատարած աշխատանքը և ավելի արդյունավետ լինելու ուսումնական պրոցեսում:</p>	<p>Առանձին սովորողների մոտ լիովին չի ձևավորվում պատասխանատվության զգացում խմբային աշխատանքի ընթացքի և ակնկալվող արդյունքի համար:</p> <p>Դժվար է կազմակերպել և կոորդինացնել աշխատանքը:</p> <p>Դժվար է յուրաքանչյուր սովորողի կատարած ներդրումը գնահատել:</p>
<p>Անհատական նախագիծ</p>	<p>Նախագծի հեղինակը ավելի լիարժեք և բազմակողմանի է ուսումնասիրում նախագիծն աշխատանքի բոլոր փուլերում:</p> <p>Զարգանում է նախաձեռնելու հմտությունը, պատասխանատվության զգացումը, ակտիվությունը:</p> <p>Նախագծի թեման կարող է առավելագույնս համապատասխանել սովորողի նախասիրություններին:</p> <p>Նախագծի ընթացքն ու արդյունքը կախված են հեղինակից:</p> <p>Վերջնական գնահատումն ավելի լիարժեք է արտացոլում կատարված աշխատանքի որակը:</p>	<p>Համագործակցելու գործոնը բացակայում է:</p> <p>Հնարավորություն չի տալիս ուրիշների կատարած աշխատանքից փորձ ձեռք բերել:</p> <p>Աշխատանքն ավելի աշխատատար և պատասխանատու է իրականացման բոլոր փուլերում:</p>

Եզրակացություն

Զուգահեռներ տանելով գրադարանավարի և մանկավարժության միջև՝ ակնհայտ դարձավ, որ գրադարանավարի մասնագիտությունը, տարեցտարի զարգանալուց բացի, նաև ձեռք է բերում մասնագիտական տարաբնույթ որակներ: Գրադարանավարի կարևոր առաքելություններից է գրադարանը մշտապես նորարարություններով թարմացնելը, նոր շունչ հաղորդելը, օգտվելով նորագույն տեխնոլոգիաներից՝ ընթերցողին գրադարան բերելու տարբեր մեթոդների օգտագործումը: Ենթարկվելով ժամանակի հրամայականին՝ գրադարանավարը դրսևորում է ճկուն մտածողություն: Բազմակողմանի զարգացած լինելով՝ նա սովորողների մեջ ընթերցանության հանդեպ հետաքրքրությունը մեծացնելու նորանոր ուղիներ է փնտրում, կամ նոր մեթոդներ կիրառում՝ նոր շունչ հաղորդելով վաղուց մոռացվածին: Մեզ հայտնի է, որ դեռ վաղնջական ժամանակներից հայկական հնագույն գրադարաններին կից գործել են դպրանոցներ, որտեղ գրադարանավարներն են զբաղվել դպրությամբ: Ուստի մեզանում նորույթ չէ գրադարանավարի մասնագիտության մեջ մանկավարժական տարրի դրսևորումը, այլ վաղուց մոռացված մշակույթ է, որը կարիք ունի վերածննդի և նորովի մատուցման: Դպրոցական գրադարանում

նախագծային աշխատանքների կիրառումը նպաստում է գրադարանավարի մանկավարժական որակների խթանմանն ու դրսևորմանը: Հստակ կարելի է ձևակերպել, որ սովորողների համար դպրոցական գրադարանը նախագծային աշխատանքներ իրականացնելու, դրանց շնորհիվ ինքնարտահայտվելու, ինքնակրթվելու լավագույն վայրն է ու միջոցը:

Գրականության ցանկ*

Տպագիր և էլեկտրոնային ռեսուրսներ

1. Е. С. Палат Метод проектов ВОСХОЖДЕНИЕ К МЕТОДУ ПРОЕКТОВ УЛЬЯМА КИЛПАТРИКА Гусаковский М.А. (ред.). - Метод проектов_ Научно-методический сборник Вильям Херд Кильпатрик - Метод проектов_ применение целевой установки
2. Մկրտումյան Անի. Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղեցույց, «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր, Եր.2020 թ.
3. Պետրոսյան Հայկ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ . ԱՆ -ՋՈՆ, 2008.
4. «Դպիր» էլեկտրոնային ամսագիր
5. Հայաստանի դպրոցների գրադարանավարների ձեռնարկ. Հունիս 2011, Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության Նախարարություն
6. Ուղեցույց ժամանակակից գրադարանավարների համար. Հունվար 2017, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

7. Tvorcheskie proekty, Inc.(2013). План оформления творческого проекта.
Симферополь, Tvorcheskie proekty.

* Օգտագործված գրականության ցանկում տեղ են գտել տպագիր և էլեկտրոնային ռեսուրսներ, որից ազդեցություն է կրել դպրոցային աշխատանքը: